Երազգավորս

Երազգավորս բնակավայրի վարչական տարածքը կազմում է 971.9հա, բնակչությունը 1526 մարդ: Երազգավորսը գտնվում է Շիրակի մարզի հարավ-արևմտյան մասում, սահմանակից է Թուրքիային: Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 1520մ բարձրության վրա: Հեռավորությունը մազկենտրոնից 12կմ է: Գյուղի կլիման չափավոր ցուրտ է: Բնակավայրը սահմանակից է 3 բնակավայրերի վարչական տարածքների, դրանք են Բայանդուր, Գետք և Ախուրիկ բնակավայրները: Բնակչությունը հիմնականում զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ, որը հանդիսանում է նրանց եկամտի աղբյուրը: Մեծ է նաև արտագնա աշխատանքի մեկնողների թիվը: Բնակավայրը համարվում է սահմանամերձ: Բնակավայրում գործում է հանրակրթական դպրոց: